

նատի: Քաճանան կ'ընդդիմանայ, առարկելով որ ինքը հասարակ դասակարգին կը պատկանի, միայն կը համաձայնի որ երբ բոլոր երեւելիները իրենց յատուկ տեղերը զբաւեն ճաշի գորգին վրայ՝ այն ատեն ինքն ալ, իր աստիճանին համապատասխան, իրեն հրամայուած տեղը կը նստի. սակայն ներկաները, Յովսէփի եպիսկոպոսի առաջնորդութեամբ՝ բռնի կերպով քաճանան սեղանին գլուխը կը նստեցնեն:

Նիւթէն շեղած չենք ըլլար երբ դիտել տամ որ Հ. Հացունի (Ճաշեր եւ Խնճոյք Հին Հայաստանի մէջ. Ս. Ղազար, 1912), բազմականը կը նկատէ ճաշու սեղանի ձեւեր, նստարան (անդ էջ 52-57), իսկ հայոց մօտ կ'ենթադրէ Եւրոպական իմաստով սեղանի գոյութիւն: Ասիկա սխալ է, հայերը եւ իրենց զբացիները երբեք չեն գիտցած Եւրոպական սեղան, այլ ճաշած են գետինը փոռած գորգերու վրայ, սփռոցներու վրայ, լաթէ կամ կաշիէ, ինչպէս նաեւ պղնձէ մեծ, տափակ «սէնի»ներու վրայ, կամ՝ ինչպէս աւելի վերջի դարուն՝ տախտակէ ոտք մը բարձր սեղանի վրայ: Այսպէս Հ. Հացունի կը սխալի բազմականը գորգէ զատ տարբեր բան մը նկատելով, առ այդ՝ ցարդ տուած օրինակներուս վրայ կ'աւելցնեմ Խորենացիի մէկ վիպական նկարադրութիւնը Սիւնեաց Բակուր նահապետին տունը կատարուած խնճոյքի մը, ուր Տրդատ անուն մէկը՝ տոփացաւ Բակուրի հարձերէն մէկուն, երբ այդ վարձակը կը պարէր, եւ Տրդատ հարձը «յիւրն քարձեաց ի բաղմականն», սակայն երբ սեղանակիցները իր դէմ կ'ընդդիմանան՝ Տրդատ ծաղկաման մը խլելով «զբարձակիցսն ի բաղմականացն ի բաց պուղեաց»⁽²⁶⁾: Հոս որոշ է որ բաղմականը գորգէ զատ ուրիշ իմաստ չունի. Տրդատ չէր կրնար հարձը ոչ «աթոռի» եւ ոչ ալ «սեղանի» վրայ քաշել, եւ ոչ ալ իր սեղանակիցները «աթոռներէն» ի բաց վանել: Եղիշէ խօսելով վերը ներկայացուած դէպքին եւ քաճանայի մասին՝ կ'ըսէ որ Յովսէփի եպիսկոպոսը իր ճառին մէջ դիտել տուաւ թէ լաւ օրինակ է իրենց քրիստոսափայլել համեստութեան քաճանան «ի գլուխ բաղմականիս մերոյ» նստած տեսնել⁽²⁷⁾ եւ ճաշէն վերջ կը գոհանային նստողները «յոտն կացին ի բաղմականացրն»⁽²⁸⁾: Աւելորդ կը նկատեմ այս մասին երկարել, միայն կ'ուզեմ շեշտել թէ ի՞նչ հարկ կար ծանօթ եւ յաճախ գործածուած «սեղան», «աթոռ» կամ «դահ» բառերուն տեղ գործածել «բաղմական» եւ ասոր տալ ամէնուն ալ հաւասար իմաստ:

Շապուհ Բագրատունիի կարծեցեալ պատմութեան մէջ կը վրկայուի որ Բիւզանդիոնի Հերակլ կայսեր (620-641) վաճառական ըրտեսը կը մտերմանայ Պարսիկ արքունի ազնուականի մը հետ, որ զինքը իր տունը տանելով «կաղմեաց նմա պայծառ բաղմականք եւ ճաշ պանազան պիտոյիւք»⁽²⁹⁾: Հոս որոշ է որ խօսքը գունազեղ, վառ,

(26) Ս. Ղազար, 1881, էջ 302:

(27) Թիֆլիս, 1904, էջ 224:

(28) Անդ, էջ 226:

(29) Էջմիածին, 1921, էջ 8: